



## Support for Improvement in Governance and Management

A joint initiative of the OECD and the EU, principally financed by the EU

### Կարճ գրություն 5

Հունվար 2011

### Պետական Գնումներ

# ԵՄ ֆինանսական շեմերի ընկալումը

#### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

- Գոյություն ունեցող շեմերը
- Ե՞րբ են սահմանվում ֆինանսական շեմերը
- Ի՞նչ սկզբունքներ են կիրառվում ֆինանսական շեմերի հաշվարկման նկատմամբ:
- Այլ նորմեր, որոնք կիրառվում են պայմանագրի արժեքի հաշվարկման նկատմամբ
- ԵՄ ֆինանսական շեմից ցածր պայմանագրերը
- Կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպություններ



[www.sigmaweb.org](http://www.sigmaweb.org)

This document has been produced with the financial assistance of the European Union. The views expressed herein can in no way be taken to reflect the official opinion of the European Union, and do not necessarily reflect the views of the OECD and its member countries or of beneficiary countries participating in the SIGMA programme.

Հրահանգը կիրառվում է միայն որոշակի տեսակ և արժեք ունեցող կամ ԵՄ համապատասխան ֆինանսական շեմը գերազանցող պայմանագրերի նկատմամբ:

Որո՞նք են ներկայիս շեմերը: Շեմերը փոխվում են կանոնավոր կերպով, հիմնականում յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ:

2010 թվականի հունվարի 1-ից մինչև 2011 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար աշխատանքների կատարման պայմանագրերի համար հիմնական շեմը 4 845 000 եվրո է, իսկ ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման պայմանագրերի համար՝ 193 000 կամ 125 000 եվրո:

Կարող եք ստուգել ներկայիս ֆինանսական շեմերը Հանձնաժողովի համացանցային էջում [www.simap.europa.eu](http://www.simap.europa.eu):

Այս շեմերն արտացոլում են այն մակարդակը, որի դեպքում ենթադրվում է, որ միջսահմանային առևտուրը հավանական է, չնայած, կախված այլ հանգամանքներից, հնարավոր է, որ մասնակիցները հետաքրքրված լինեն ԵՄ այլ Անդամ երկրներում շեմից ցածր պայմանագրերի մեջ: Շեմերը սահմանվում են նաև՝ ապահովելու համար, որ ԵՄ ամբողջական մրցութային ընթացակարգը կիրառելու վարչական ծախսերն արդարացված են, քանի որ համամասն են հայտարարված պայմանագրի գնին:

Կան մի քանի ֆինանսական շեմեր, տարբեր պետական պատվիրատուների և պայմանագրերի նկատմամբ կիրառվում են տարբեր շեմեր: Հետևաբար, ճիշտ շեմը որոշելու համար պետական պատվիրատուն պետք է իմանա, թե որ տեսակին է պատկանում ինքը և ինչ է ձեռք բերում:

Կան մի քանի բավականին բարդ դրույթներ, որոնք սահմանում են պայմանագրի արժեքի հաշվարկումը: Այս դրույթները տարբեր են աշխատանքների կատարման, ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման պայմանագրերի համար:

Գոյություն ունեն նաև հատուկ դրույթներ, որոնք ներառում են շրջանակային համաձայնագրերի, գնումների դիմամիկ համակարգերի, նախագծման մրցութային և աշխատանքների կոնցեսիայի պայմանագրերի արժեքի հաշվարկման կարգը:

## **Ե՞րբ են սահմանվում ֆինանսական շեմերը:**

Ֆինանսական շեմերը հիմնականում ամրագրվում են երկու տարի ժամկետով և փոփոխվում են յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ, ուժի մեջ մտնելով հունվարի 1-ին: Փոփոխություններն արվում են Եվրոպական Հանձնաժողովի Կանոնակարգերի միջոցով: Կան դրույթներ, որոնք թույլատրում են ֆինանսական շեմերի փոփոխումն այլ դեպքերում: Ներկայիս ֆինանսական շեմերը կարող եք գտնել Հանձնաժողովի համացանցային էջում. [www.simap.europa.eu](http://www.simap.europa.eu):

**Ընդհանուր շեմեր աշխատանքների կատարման, մատակարարման և ծառայությունների մատուցման պայմանագրերի համար.** Սրանք միակ շեմերը չեն,

բայց այն շեմերն են, որոնց ավելի հաճախ գործնականում հղում են անում, քանի որ դրանք կիրառվում են պետական պատվիրատուի կողմից հայտարարված պայմանագրերի մեծ մասին նկատմամբ:

Աշխատանքների կատարման, ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման պայմանագրերի համար գործում են տարբեր շեմեր: Աշխատանքների կատարման պայմանագրերի համար շեմը շատ ավելի բարձր է, քան ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման պայմանագրերի համար: 2010 թվականի հունվարի 1-ից մինչև 2011 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար աշխատանքների կատարման պայմանագրերի շեմը 4 845 000 եվրո է, իսկ ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման պայմանագրերի համար՝ 193 000 կամ 125 000 եվրո:

Սահմանված են երկու տարբեր շեմեր ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման պայմանագրերի համար: Ավելի ցածր շեմը կիրառվում է այն պետական պատվիրատուների գնումների նմատմամբ, որոնց գործունեությունը կարգավորվում է ՊԳՀ-ով, իսկ ավելի բարձր շեմը՝ այն պետական պատվիրատուների գնումների նկատմամբ, որոնց գործունեությունը չի կարգավորվում ՊԳՀ-ով:

**Այլ շեմեր.** Կան սահմանված այլ շեմեր՝ ռազմական ոլորտի, աշխատանքների կատարման կոնցեսիայի, սուբսիդավորված աշխատանքների և կոնցեսիոներների կողմից շնորհված պայմանագրերի համար: Կան լրացուցիչ շեմեր, որոնք կիրառվում են նախնական տեղեկատվության հայտարարությունների նկատմամբ, որը պետական պատվիրատուն կարող է ընտրել հրապարակել մատակարարման և ծառայությունների մատուցման պայմանագրերի համար տարեկան հիմքով և աշխատանքների կատարման պայմանագրերի համար՝ որոշակի պայմանագրերին հատուկ հիմքով:

## **Ի՞նչ սկզբունքներ են կիրառվում ֆինանսական շեմերի հաշվարկման նկատմամբ:**

Կան մի շարք ընդհանուր սկզբունքներ, որոնք կիրառվում են բոլոր տեսակի պայմանագրերի գնահատված արժեքը հաշվարկելու համար.

- հաշվարկը հիմնված է վճարման ենթակա ողջ գումարի կամ պայմանագրի ողջ արժեքի վրա, իսկ շրջանակային համաձայնագրերի և գնումների դինամիկ համակարգերի և չափաբաժինների բաժանված պայմանագրերի դեպքում, գումարը պայմանավորվածության համաձայն շնորհվելիք բոլոր հնարավոր պայմանագրերի ամբողջ արժեքն է,
- բոլոր ֆինանսական և ոչ ֆինանսական տարրերը, որոնք կարող են վճարվել, պետք է հաշվի առնվեն՝ ներառյալ այլ աղբյուրից վճարումները,
- Պայմանագրի գնահատված արժեքը պետք է հաշվի առնի գնահատված ընդհանուր գումարը, ներառյալ բոլոր հավելյալ հնարավորությունները և նորացումները (նույնիսկ եթե այս հավելյալ հնարավորությունները կամ

նորացումները հետագայում չեն կիրառվել) և բոլոր մրցանակներն ու այլ վճարները, որոնք տրվում են բոլոր մասնակիցներին:

- հաշվարկը բացառում է ԱԱՀ-ն,
- չպետք է լինի պայմանագրի ենթաբաժանում՝ Հրահանգի կիրառումից դիտավորյալ խուսափելու համար,
- Գնահատումը պետք է վավեր լինի այն պահին, երբ պայմանագրի հայտարարությունը ուղարկվել է Եվրոպական Միության Պաշտոնական Տեղեկագրի Գրասենյակ (ԵՄՊՏ) կամ, եթե նման հայտարարություն չի պահանջվում, այն պահին, երբ պետական պատվիրատուն սկսում է պայմանագրի շնորհման ընթացակարգը:

### **Կա՞ն արդյոք այլ կանոններ, որոնք կիրառվում են պայմանագրի արժեքի հաշվարկման նկատմամբ:**

Ի հավելումն այս ընդհանուր սկզբունքների, գոյություն ունեն կարևոր մանրամասն կանոններ, որոնք կիրառվում են յուրաքանչյուր տեսակի պայմանագրերի արժեքի հաշվարկման համար և վերաբերում են նաև հատուկ հանգամանքներում պայմանագրի արժեքի հաշվարկմանը: Պետական պատվիրատուն պետք է հաշվի առնի այս կանոնները, երբ հաշվարկում է պայմանագրերի արժեքը:

Ընդհանուր սկզբունքների և պայմանագրի արժեքի հաշվարկմանը վերաբերող հատուկ դրույթների հիմնական նպատակն է՝ ապահովել, որ (1) առկա է շնորհվելիք պայմանագրի արժեքի իրական և թափանցիկ նախնական գնահատում և (2) պետական պատվիրատուն չի փորձում խուսափել Հրահանգի կիրառումից, օրինակ պահանջը կամ պայմանագիրը բաժանելով ավելի փոքր բաժինների կամ պայմանագրերի, որոնք ցածր են շեմից:

Այս կանոններն ընդգրկում են դրույթներ, թե ինչպես պետք է վերաբերեն նման կամ կրկնվող պահանջներին, ինչպես վարվել այն պայմանագրերի հետ, երբ նրանց պայմանները կամ արժեքը կարող է անորոշ լինել, ինչպես նաև ներառում են փոքր արժեքով պայմանագրերի համար վերապահում՝ չափաբաժինների համատեքստում: Կանոնները ներառում են նաև դրույթներ, որոնք ընդգրկում են իրավիճակներ, երբ պետական պատվիրատուն շնորհում է մի քանի պայմանագրեր որոշակի ծրագրի համար կամ մի քանի պայմանագրեր նմանատիպ ապրանքների մատակարարման կամ ծառայությունների մատուցման համար: Տերմինը, որը հաճախ կիրառվում է՝ այնպիսի պահանջներին հղում անելու համար, որոնք ներառում են մի քանի պայմանագրեր կամ մի քանի կրկնվող կամ նմանատիպ պահանջներ, “միավորումն” է:

#### **ԵՄ ֆինանսական շեմից ցածր պայմանագրերը**

**Միավորման վերաբերյալ դրույթները.** Պահանջը՝ հաշվարկել, թե արդյոք պայմանագրերն այնպիսի արժեք ունեն, որի դեպքում դրանք պետք է

հրապարակվեն՝ օգտագործելով ԵՄՊՏ-ում հրապարակված պայմանագրի հայտարարությունը, վերաբերում է բոլոր պայմանագրերին, նույնիսկ նրանց, որոնք, թվում է, թե ցածր են ԵՄ ֆինանսական շեմից, որպեսզի հաստատեն, թե արդյոք Հրահանգը կիրառվում է, թե ոչ:

Միավորման վերաբերյալ դրույթները նշանակում են, որ, օրինակ մի քանի նմանատիպ պայմանագրեր, որոնցից յուրաքանչյուրի արժեքը ցածր է ԵՄ ֆինանսական շեմից, կարող են կարգավորվել Հրահանգով: Սա կարող է տեղի ունենալ այն պատճառով, որ բոլոր պայմանագրերի արժեքները պետք է միավորվեն, եթե որոշակի պայմաններ բավարարված են և ընդհանուր արժեքը կարող է գերազանցել ԵՄ ֆինանսական շեմը: Հրահանգն այդ դեպքում կկիրառվի բոլոր պայմանագրերի նկատմամբ:

**Շեմից ցածր պայմանագրերի նկատմամբ կիրառվող նորմերը.** Վիճակագրությունը ցույց է տալիս, որ պետական պատվիրատուի կողմից շնորհվող պայմանագրերի մեծամասնությունը ենթակա չեն ԵՄՊՏ-ում հայտարարություն հրապարակելու պահանջին: Օրինակ, կարող են լինել այն տեսակի պայմանագրեր, որոնց վրա չի տարածվում այս պարտականությունը կամ դրանք ցածր արժեք ունեն և հետևաբար, չեն բավարարում ԵՄ ֆինանսական շեմը:

ԵՄ Անդամ երկրները հիմնականում ընտրել են իրենց սեփական նորմերը՝ շեմից ցածր և գնումների վերաբերյալ Հրահանգի մանրամասն պահանջներին ոչ ենթակա պայմանագրերի համար: Առանձին պետական պատվիրատուների կարող են նաև թույլատրել կամ պահանջել հրապարակել և հետևել գնումների վերաբերյալ իրենց ներքին կանոններին, որոնք կարող են ներառել լրացուցիչ ազգային և/կամ տեղական ֆինանսական շեմեր:

Ազգային և/կամ տեղական ֆինանսական շեմերը կարող են առաջ բերել տարբեր տեսակի պահանջներ՝ հայտարարության հրապարակման և մրցութային գործընթացի առումով, որոնք օգնում են թափանցիկության և հավասար վերաբերմունքի ապահովմանը: Օրինակ,

- Ուղղակի հրավերները, որոնք կարող են թույլատրվել շատ ցածր արժեք ունեցող պայմանագրերի համար,
- Պարզեցված ընթացակարգերը, ինչպիսիք են մրցակցային գնառաջարկները կամ որոշակի քանակի տնտեսվարող սուբյեկտներից առաջարկների ստացման պահանջը կամ տեղական մակարդակում հայտարարությունը և տեղական մրցակցային գործընթացի իրականացումը միջին արժեք ունեցող պայմանագրերի համար, որոնք ցածր են ԵՄ շեմի մակարդակից:

## Կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպություններ

Կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպությունների դեպքում շեմերն ավելի բարձր են ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման պայմանագրերի համար, քան դասական ոլորտի պայմանագրերի նկատմամբ կիրառվող շեմերը: Ինչպես դասական ոլորտում, կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպությունների նկատմամբ ևս կիրառվող շեմերը հիմնականում սահմանվում են երկու տարին մեկ անգամ և ներկայիս շեմերը կարող եք գտնել Հանձնաժողովի համացանցային էջում. [www.simap.europa.eu](http://www.simap.europa.eu):

Վերը նշված ընդհանուր սկզբունքների մեծ մասը հավասարապես կիրառվում են կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպությունների նկատմամբ, սակայն գնահատված արժեքի հաշվարկման ժամկետները տարբեր են: Արժեքի գնահատման ժամանակը կախված է նրանից, թե որ ընթացակարգով է կատարվում գնումը: Համապատասխան ժամկետները հետևյալն են.

- Նախաորակավորման համակարգ. այն օրը, երբ սկսվել է ընտրությունը
- Ցուցադրական հայտարարություն. պայմանագրի հայտարարությունը ԵՄՊՏ ուղարկելու օրը
- Այլ դեպքեր. այն օրը, երբ պայմանագրի հայտարարությունը պետք է ուղարկվեր ԵՄՊՏ, եթե կիրառվել է մրցույթի հայտարարման պահանջը և կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպությունը որոշել է այդ պահանջը բավարարել պայմանագրի հայտարարության միջոցով:

Կան մանրամասն դրույթներ, որոնք ներառում են այն եղանակը, որով պայմանագրի արժեքը հաշվարկվում է հատուկ տեսակի պայմանագրերի և հատուկ իրավիճակների համար, և սրանցից մի քանիսը տարբերվում են դասական ոլորտի նկատմամբ կիրառվող նորմերից: Ինչպես դասական ոլորտում, պայմանագրի արժեքի հաշվարկման դրույթների հիմնական նպատակը ապահովելն է, որ առկա լինի շնորհիվելիք պայմանագրի արժեքի իրական և թափանցիկ նախնական գնահատում և որ պետական պատվիրատուն չփորձի խուսափել Հրահանգի կիրառումից, օրինակ պահանջը կամ պայմանագիրը բաժանելով ավելի փոքր բաժինների կամ պայմանագրերի, որոնք ցածր են շեմից:

**Հետագա ընթերցանություն.**

[SIGMA Public Procurement Training Manual](#)